



ՀԱՅՐԵՆԻ ՏԱՐԵՐ ԹՎԵԿՈՒԹՅՈՒՆ Հրատարակուում է իւրաքանչեւր ամսի 10 ին և 20 ին . առքեզան գինը ճնշեալու հետ ՚ի միասին է Շ ուրբ . արձակ . իսկ կես տարուանը 3 ուրբ . արծ . կանխիկ վճարելի :

ՕԳՈՍՏՈՍԻ 20

Հ. 2

1861 ՀՄ

## ՄՈՍՔՈՒԾ

1861. Օգոստոսի 10.

Օգոստոսի 3 ին՝ առաւտօնեան ժամը 9 ին, Փեթերպուր կից երկաթի ճանապարհով, բարեհաճեցան դալ Մոսքուա Նորին Կայսերական Մեծութիւնը՝ Կայսերուհին Մարիա Ալեքսանդրովնա և Նորին Կայսերական Բարձրութիւնը Մեծ Տշխանն Աէրկիյ Ալեքսանդրովիչ և Մեծ Տշխանուհին Մարիա Ալեքսանդրովնա, և շուտով ուղևորեցան թառլայի ճանապարհով:

Նոյն օրը եկաւ և Նորին Կայսերական Բարձրութիւնը Մեծ Տշխանն Նիկոլայ Նիկոլայիվիչ (Երեցն), և ուղեռ բարեկաթառութեան ժամանու ճանապարհով:

Օգոստոսի 7 ին՝ առաւտօնեան ժամը 10 ին, բարեհաճեցան դալ Մոսքուա Նորին Կայսերական Մեծութիւնը՝ Խաղաղոր Կայսրը, և երկաթուղու իջևանից ուղեղորեցաւ թառլայի ճանապարհով:

Նորին Կայսերական Մեծութեան հետ եկան և Նորին Կայսերական Բարձրութիւնը Մեծ Տշխանն Կայսերական

Ժառանգն Նիկոլայ Ալեքսանդրովիչ և Մեծ Տշխանն Միհեայիլ Նիկոլայիվիչ որք և իջևանեցան Կրէմլի մեծ Պալատի մեջ:

Օգոստոսի 8 ին՝ Նորին Կայսերական Բարձրութիւնը Կայսերազն Ճառանդրական Մեծ Տշխանն Նիկոլայ Ալեքսանդրովիչ ուղեղորեցաւ երկաթի ճանապարհով Մոսքուայից Վլատիվիլ:

Օգոստոսի 9 ին՝ առաւտօնեան ժամը 10 ին՝ Նորին Կայսերական Բարձրութիւնը Մեծ Տշխանն Միհեայիլ Նիկոլայիվիչ ուղեղորեցաւ այս տեղեց Փեթերպուրի:

Նիկոլայ ամի Յուլիս ամսի չորրորդ օրը կմնայ յաւիտեան՝ անմուանալի այն մանդկանց համար, որ կարողացան հաւաքել մեծ հարստութիւն, բազմաթիւ միլիոններ՝ ամենատեսակ օղջոյ (առաղի) վաճառմամբ, այն մարդկանց համար, որ հազարաւոր ստութիւններով կարողացան իւրեանց նիւթական, ոչնչութիւնից բարձրանալ նոյն նիւթական բարօրութեան վերին ասահճանը, միով բանիւ՝ կապալատունների համար (օտկուբշելիների): Այդ օրը թագաւոր Կայսրը հաստատեց արբեցուցիչ ըմպելիաց եկամուռքի հաւաքման մասին գրած սահմանադրութիւնը (ուղարկելու պահանջման պահանջման մեջ կամաց անգամ նշանակած անդամ նշանակիս տեսարան):

Այդ գտանուող աշակերտները (որոց թիւը հասանում էր մինչև 70 ի, որովհետեւ միւսերը ամառնային ժամանակի պատճառաւ գտանուում էին ՚ի բացակայութեան) շարուեցան կարգաւ մերցիշեալ գայիթի մեջ, ուր մեր սիրելի կառավարիչը կամենում էր տալ իւր հրաժարական ողջցնը: Այսուուուց էր յցից այն վայրկեանը, երբ մի քանի բառերով յայտնեց նա մեզ իւր սրտի արտանութիւնը և մկան համբուրել մեջ: Այս մի քննուց հօր հրաժարական ողջցնը էր իւր երախտագիտ ողջուց, որը լացեին լինում զառն արտասունդով լսելով վերջին անգամ նորա հայրական խրանները: Այս ժամանակ հինգերորդ գամատան աշակերտ Նիկոլայոս Ալեքսաննեանցը կարձառաւ ծառ կարդաց, որով յայտնեց նորան աշակերտաց անկեղծ տրամաւթիւնը և ՚ի սրտէ շնորհակալութիւնը նորա բարերարութեանց համար, որ ցուցանումէր մեջ հինգ տարուայ ընթացքում: Դասղողուն ձեռնով առաւ նա այն ձառը և պահից իւր մօն, իւր մեր անկեղծ սիրոց նշան գէպ առ ինքը:

Այս օրը, առաւտօնեան տասնեւերկուժամկն ուղեղորեցինք նորան մինչև երկաթուղի, ինչպէս և բոլոր վարժապետները, վերակացուները և այլ շատ մարդիկ նորա ծանօթներից: իսկ աշակերտներից մի քանիսը գնացին նաև մինչև առաջին օթևանը, որ 17 մղոն հեռուէ քաղաքից:

## ԱԱՄԱԿԱԳ. ՄՈՒԹԻԹԻՒԾ

ՄՈՍՔՈՒՏԱՅԻՑ

31 Օգոստոսի 1861.

Դեռ չկարողացանք մոռանալ այն տիրապի տեսարանը, երբ մեր արժանայարդ տեսուչը, Պ. Էմինը, արտասուալից աչքերով և զողոցուն ճայնով ասաց իւր հրաժարական ճառը աշակերտաց առաջն ճեմարանիս ընդարձակ դահլիճների միջում, ինչպէս աշանեւ կայսանումէ մեջ կրկին անգամ նշանակիս տեսարան:

Մեր կառավարիչը, Նիկոլայոս Դաւթեան գելեանեանց, թուղարժութիւն կառավարչութեան պաշտնը, սահմանից գուր գնալու պատճառաւ իւր ընտանեաց հետ: Ճեմարանիս աշակերտաց ծնողները (որը ճանաչումէին նորան) ցաւով պէտք լսեն այս լուրը, որովհետեւ նոքա միշտ զգումեին գէպ ՚ի նա երախտապարտութիւն՝ նորա ծշմարիտ հայրական հոգացողութեան համար, որ ունէր նա նոցա որդուց դաստիարակութեան և բարժական կրծութեան վերայ:

Յուլիսի 30 ին, նորա ուղեղորութեան օրը, ճեմարանիս Մակովի

որ մին անգամով դուրս հանեց աղքային մարմնից այն սոս-  
կալի ժամանակատը, որ այդքանի երկար ժամանակ ուտումէր նո-  
րա անդամները։ Այդ սահմանադրութիւնը հրատարակելու  
նպատակը երեւումէ արդէն Բարձրագոյն Հրովարտակի առա-  
ջին տողերից, ուր ասած է «Ըմպելեաց եկամուտքի հաւաքման  
ձևերը, որ Տէրութեան եկամուտքի դիմաւոր աղբիւրներից  
մինն է, ունին շատ էական անյարմարութիւններ, թէ նոցա-  
տեսակ տեսակ լինելու և թէ Տէրութեան այլ և այլ մասանց  
մէջ անհաւասարաչափ բաժանուած լինելու պատճառով, և  
թէ կամ ես առաւել՝ որովհետեւ կայ համարեա ամենայն տեղ  
վարձու տալու սովորական եղանակը, որ կապուած է մեծ ծան-  
րութեան հետ ժողովրդեան համար և նեղութեան հետ մաս-  
նաւոր առեւտրական պարապմանց համար»։ Յետոյ, Բարձ-  
րագոյն Հրովարտակից երեւումէ, որ արքունի գանձուց «Աս-  
խարարի խորհրդածութիւնները՝ թէ ի՞նչ սկզբունքների վե-  
րայ պէտք է կարգադրուի ըմպելեաց եկամուտքի հաւաքման  
եղանակը, որ համանգամայն լինի տէրութեանը յարմարաւոր,  
քննուեցան, Բարձրագոյն հրամանով, տէրութեան խորհր-  
դարանումը»։ «Դորանից յետ», ասած է Հրովարտակի մէջ,  
26 Հոկտ. 1860 ամի, «Մեք հաստատեցինք բոլըր տէրու-  
թեան համար միաձև հարկապահանջութեան եղանակը, 1863  
թուականից սկսած, ըմպելեաց եկամուտքի հաւաքման մա-  
սին, խափանելով բոլորովին դորա վարձու տալը»։

Ծաէ ողբան այդ նոր կարգադրութիւնը նշանաւոր է և հարկաւորագոյն, աւելրդ ենք համարում խօսել այս տեղը որովհետեւ ամենայն մենավաճառութեան վասար բաւական ապացուցած ջշմբառութիւն է, մանաւանդ այնպիսի մենավաճառութեան, որ ունի շատ կողմնակի հանգամնելներ, որպիսի էր ըմպելեաց կապալի եղանակը։ Պետք է ուրախանալ այդ փոփոխութեանը, որով դարձեալ մին հին ձեւ, դարձեալ մին հին սովորութիւն կորաւ գնաց, և չկայ մին այնպիսի անշիշառ մնարդ, որ քաղցրութեամբ յիշատակէ նորա անունը։ Այդ նոր փոփոխութիւնը մեծ հարուած տուեց վերջին կապահանուներին, որ շատ նախանձումն իւլիեանց նախորդներին, որովհետեւ նորս կարողացան արդէն հաւաքել միլիոն-

Վեծ տրտման թիւն պատճառեց մեղ նորա մէկնուիլը. և ինչպէս կարող էինք չորտմիլ և չցաւիլ այն մարդու վերայ, որ շատ բարերարութիւններ էր արել մեղ, որ միշտ յորդրումէր մեղ ուսման մէջ, միշտ ջանք էր զնում զարգացնել միր միտքը և մեր բարյական զգացողութիւնը դէպ ՚ի բարին: Նորա սերմանած սերմերը չեն անկած ապառաժ քարի վերայ, այլ փափուկ հողի մէջ, որք անսարակցոյ կաձեն և գեղեցիկ պատու կտան ժամանակում:

Հայց միակ միսիթարութիւնը, որ թողաւ մեզ մեր բարերարը, պահանջութիւնը մոռացնել կտոյ մեզ մեր բոլոր տրտունութիւնները. սոցանից մինն է մեր նոր կառավարիչ Պ. Եանուարի Եկեղեցով, որ յայտնի է իւր զրուածքներով, և միւսը նոր տեսուչ Պ.Գ.Էրգ Քանանեանց, որ նշնապէս յայտնի է բոլոր Մոսկովայնակ համազգիններուն, և որոց վերայ մեք, աշակերտներս, քաջայցաւ եմք:

Ներ: Խեղջ մարդիկ. յուսալով ժողովրդի բարեմատվթեան վերայ և կարծելով, թէ խմելը մարդուս առաջին և զլիաւոր ուրախութիւնն է, անչափ աւելացրեցին կապալի վճարման գումարը վերջին անգամումը, և ահա յայտնուեցան հասարակութիւններ, երեւեցան մարդիկ, որ երդմամբ դաշնք դրեցին չխմել ամենեին. ի՞նչ անես. բաղդ ասած բանը մին կամակօր կնոջ նման շուր է տալիս երեսը այն ժամանակ, երբ չես կամենում աջքերդ դարձուցանել նորա կերպարանքից:

Եշրկու շաբաթ առաջ քաղաքին մէջ երևեցաւ մին հարստութ  
պատրի, որի մասին հարկաւոր է ասել քանի մի խօսք:

Առաքուայի Սբերենուէկ, անուտանած մասնի դիւանատունը  
բերուեցաւ՝ ողորմութիւն խնդրելու պատճառաւ (որ կառա-  
վարութիւնից արգելուած է), ծառայութիւնից դուրս եկած  
Ք. աստիճանաւորը; որի մօտ գտան 79,000 ռուբ. ասիկ-  
նացիյի փոխառութեան նամակներ (վէքսիլ). 48,070 ռուբ.  
արծ. տոմճակ որ տուուած է նորան Առաքուայի վաճառակա-  
նական զբամատունից (քօմմէրչէսքիլ բանքից), և 6,000 ռուբ.  
արծ. նազար փող: Քննութիւնից իմացուեցաւ, թէ այդ  
մարդը բնակութեան համար վարձում է եղել մին անկիւն  
75 կոպ. արծաթով ամիսը. թէ առաւօտից մինչեւ երեկոյ  
տանը չէ լինում: Կերակուրի տեղ գործ է ածում իւր հետ  
բերած՝ ողորմութեամբ հաւաքած՝ հացի կտորները, և եթէ  
այն կարոնների մէջ պատահում էր սպիտակ հաց՝ նա ծախում  
է եղել նորան: Թէ նորա գոյըը է միայն իւր վերայ ունեցած  
հին հանդերձը և մի փսխաթ (քօշօյա), որի վերայ նա պառ-  
կումէ եղել: Երդէն չորրորդ անգամն է, որ բունում են նորան  
ողորմութիւն խնդրելու մասին և երկու անգամ ևս գտան-  
ուել է նա ողորմութիւն խնդրողների վերայ եղած քննու-  
թիւն անող ժողովի մէջ: Նորա խնդրերին նայելով, նա ունի  
մի որդի և երկու դուստր, բայց թէ որ տեղ են գտանվում  
նոքա՝ չգիտէ:

Ј. de St.-P. զբումէ. Յուլիսի 23ին, կիւրակէ օրը, «Եռցին Կայսերական Մեծութիւնքը Խագաւոր Կայսրը և Թա-

ԺԻԴԱՎՅԱՐՓ ՊԱՏԵՍԽԵՆՆԵԲ

• Հութերը ինչո՞ւ համար ամուսնացաւ

**Պ.** Աստանայի սիրող ցաւեցնելու համար (Տէս Հանու. Սուր Հայութը. հար. Է. 269 էլեմենտ) :

Երբ որ Աիր Վահեամն Բարեկը առաջարկում էր Երկրագործութեան ընկերութիւնին մի նոր հնապատճեանը բարեկացնելու մասին, յանկարծ հանդէս դուրս եկաւ մի զիւղացի և ասաց՝ թէ այդ հնապատճ անկարելի է։ Բարեկը բարեկացաւ և գուշեց՝ թէ ինքը ուսել է երկու համալսանների միջում, ուրիմն՝ հաստատապէս, զիւղացիկց շատ զիտէ։

— Եւ ես ունիմ հորթել (տելյատ), որք ծծում են երկու կովից, պատասխանեց զիւղացին, բայց նոքա միշտ յիմարագոյն են միւսերից:

գաւոր Կայսերուհին բարեհաճեցան ներկայ գտանուելու ֆեթերկովի պալատի մէջ՝ Քաղաքայի հոռական (աշուշանական) մէքենաների փորձառութեանը, որոյ գործածութիւնն մոտած է Ոռուսից բոլոր բանակազօրուց մէջ։ Օգոստավիառ այցելուքը դիտեցին մեծ հաճութեամբ այդ փորձերի վերայ, և հասուլնելով այդ մեքենաների մեծամեծ օգուտներին, բարեհաճեցան յայտնել Տւրեանց լիակատար շնորհակալութիւնը Փարբեան Քաղաքայի ընկերութեան Գործակալ Պ. Շամթէ Ոօզէին։

Կորին Կայսերական Սեծութեան դիւանատան երկրորդ բաժինը Կ լոյս ընծայեց 33 երորդ հասորը «Ախակատար հաւաքման օրինաց Կայսերութեան Ռուսաց», որ պարունակում է իւր մէջ 1858 թուականի մէջ հրատարակուած կամ Հաստատուած օրէնքները։ Այս հատորիս բովանդակութեանը միջամտիւ լինելով՝ գտանում ենք այլ և այլ օրենքների մէջ, 1858 թուականի, թէսդոսիայի Հայոց ուսումնարանի հաստատութիւնը, որ հիմնարկուել է եկեղեցական գումարների և խալիւեանցի նորիաբերութեան հաշուովը, և պէսք է կառավարուի ազգային լուսաւորութեան նախարարի վերատեսչութիւնից ազատ և այն հիմնան վերայ, որ ներկայացրել էր Այլաղեան Վարդապետը։

— Ըմագլուռութիւն եղաւ որպէս Ռուս Հպատակներին, այնպէս և օտարականներին, ևս և Հրէաններին՝ վեց տարիւց մէջ բոլորպին ազատ առևտուր առնել օտար երկիրներից բերուած փայտով Տնէստը և Բրուտ գետերի վերայ, նոյն իսկ հիմնան վերայ, ինչպէս թայլուութիւն եղած էր նախարարների ժողովի հաստատութեամբ 1847 թուականին Ապրիլի 8 ին։

— Ըմագաւոր Կայսրը նախարարների ժողովի հաստատութեամբ, ներկայ տարւոյս Ցունիս ամսի 4 ին, Բարձրագյնս բարեհաճեցաւ հրամայել Թոյլ տալ բանալու Փեթերպուրկումը Աղեքսանդրեան աւ նուով ուսումնարան աղքատ արհեստաւորների երեխանների համար, և հաստատեց ուսումնարանի կանոնները։

— Ըմագաւոր Կայսրը նախարարների ժողովի հաստատութեամբ, ներկայ տարւոյս Ցունիս ամսի 4 ին, Բարձրագյնս բարեհաճեցաւ թոյլ տալ հիմնել Մոսքուայի մէջ «Եղայլուսիրութեան ընկերութիւն», որի պարտականութիւնը պիսի լինի տալ աղքատներին օթեան, և հաստատել այս մասին գրուած կանոնները։

— Մոսքուայի մէջ թագաւոր Կայսեր հաստատութեամբ հիմնուում է, Փեթերպուրկի օրինակով՝ «Հասցէական սեղան» որի պարտականութիւնը պիտի լինի. առ 8ուցանել շուտով և շշիւ Մոսքուայի մէջ գտանուող անշարժ գյորերը և նոցաւ տէրերը. ի, 8ուցանել այն տունները և տէղերը, ուր գտանուում են Տէրութեան դիւանատունները. դ, 8ուցանել Մոսքուայի բոլոր բնակիչների բնակութեան տէղը, փոխադրութիւնը և գնալ գալը. դ, Ցուտով գտանել այն անձննքը, որը Տէրութեան յշխ հարկաւոր են. ե, Հասուցանել ամենայն կառավարութեան կամ անձանց՝ նոցաւ պահանջմունքով, ձիշդ տեղեկութիւններ՝ գտանուում է այս ինչ մարդ քաղաքի մէջ, և ունի՞ն առ արդեք անշարժ գյոր, թէ ոչ. և զ, Հասուցանել ամենեցուն և իւրաքանչիւր պահանջողի տեղեկութիւններ հարկաւոր անձին բնակութեան, և կամ նոյն անձին Մոսքուայից դուրս ելած ժամանակի վերայ։

— Յուլիսի 16 ին Աբրունի գանձուց նախարարը հաստատեց ժողով, որ նա մանր արծաթ փողի գործածութեան մէջ փոքր երեկու կամ պակասուելու պատճառները, և այդ երեւյթի հետեանքները քննէ, նաև ցցց տայ, թէ ի՞նչ միջոցներ հարկաւոր են, որ մանր արծաթ փողը կարողանայ բաւականութիւն տալ գործածութեան մէջ։

— Կորին Կայսերական Սեծութիւնը թագաւոր Կայսրը՝ ամենողորմածարբարեհաճեցաւ նուիրել Մոսքուայի մէջ հիմնարկուող նոր հաստատական թանգարանին՝ հանգուցեալ իվանովի նկարածական էամբական համար։

որ ձեւացնում է Երեկուան ՑԻՍՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՒՆ, որը սկզբում գնել էր Կորին Մեծութիւնը Կայսերական Էրմիթաժի համար։

Յուլիսի 29 ին Լազարեան Ճեմարանի վարժապետները և միւս պաշտօնականները իւրեանց շնորհակալութիւնը ցոյց տալու համար Պ. Կիկոլայոս Դեկանեանցին (որ՝ որպէս գրուած էր լրագրիս նախլնթաց համարին մէջ՝ թողուց իւր պաշտօնը) ճաշ տուին նորան, և այն ժամանակ ևս յայնեցին նորան իւրեանց շնորհակալութիւնը՝ նորա հինգամեայ կառավարչութեան համար, ևս և իւրեանց տրտմութիւնը այդպիսի կառավարչութեան մասին։ Միւս օրը, այն է ամսի 30 ին, Պ. Դեկանեանցը ուղևորեցաւ օտար տահման։ Բայց այս դիտուածի նկարագրութիւնը կտեսնեն ընթերցողները Պ. Բաստամեանցի նամակի մէջ։

— Հայոց աղգիս որբանութեան վերայ կարծիքներ շատ կան. ոմանք չորս միլիոն են համարում, և ոմանք հինգ։ Հ. Մանուել Վ. Քաջունինին իւր «Եշխարհագրութիւն Հին և Կոր Հայաստանեայց» վերնադրով պատուական գրքոյիկն մէջ՝ այդ մասին այսպէս է գրում 230 երեսում։

«Հայոց աղգիս աշխարհիս չորս կողմը ցրուած ըլլուրն՝ որոց չգիտացուիր ժողովրեան թիւը. բայց սովորաբար երկուք ու կէս կամ շատ շատ երեք միլիոն կը սեպուի, այսնիքն։

500,000 ՚ի Ոռուսատուան,  
100,000 Պարսկատուանի մէջ,  
18,000 ՅԱւստրիա,  
10,000 ՅԱվրիկէ և ՚ի Հնդիկս,  
1,000 Եւրոպայի այլ և այլ կողմեր,  
400,000 Եւրոպայի Տաճկատուան։

Խոկ մնացածները (մի միլիոն ու կէսի չափ) Մեծ և Փոքր Հայոց մէջ։

— Անցեալ Մայիս ամսի 12 ին, յետ կէս աւուր, ժամը 4 ին և 10 լուսի, եղաւ Շուշի քաղաքումը երկրաշարժութիւն, որ տեսեց մինչև 15 վայրիկան։ Այսպիսի երկրաշարժութիւն դեռ եղած աղած այդ քաղաքում, և չնայելով նորա տանուր շնորհթիւններին, շատ տեղ որմերը (պատերը) փուլեկան, մինչև անգամ Հայոց եկեղեցւոյ գմբէթն ևս ճեղքուած է։

— Դորպատու Համալսարանի Հայ ստուդիունները փոխադրուեցան Մոսքուա։

— Անցեալ տարւոյս Ճռաքաղի 16 երորդ տեսակում (264—265 երեսներում) յիշատակուած Միլտոնի Կորլուտեան Դրախտի նոր թարգմանութիւնը, որ արաւ Հ. Ծուսէն Վ. Բագրատունին, այս օրերս ստացանք Աննեաթիկից, և ստուգուեցաւ Հ. Դրիփոր Վ. Ճելալի դրածը՝ թէ ա՛մ մեծ պարծանա է այդ թարգմանութիւն արդի գրականութեան մէջ աղյուսական թանգարանի միջոցների հարկաւոր անձին բնակութեան և կամ նոյն անձին Մոսքուայից դուրս ելած ժամանակի վերայ։

«Մո շնորհաշուք Վեհափառութիւն Ակտորիայ Մատուցեալ

թագաւորութեան Մեծին Բրիտանիոյ և Իռլանդիոյ՝ պյու չափաւ թարգմանութիւն Կորսական Դրախտին Միլտոնի ՚ի գրաւոր բարբառ Հոյշ կական, որին հաճութեամբն մեծարանոք ընծայի իրերում վեհափառութեանն բոլորանուէր խոնարհ ծառայից Ալբրայէ և ՚ի միարանից Միխմարենան ուստի սրբոյն Ղաղարու, որ ՚ի Անենետիկ»:

— Տիփիսից գրում են մեղ՝ թէ շուտով կհրատարակուին այն տեղ՝ Ներսիսին Դպրոցի նոր կանոնադրութիւնները:

— Վուքուայի վաճառականները և մեշտանինները՝ իրեանց ուրախութիւնը՝ թէ Թագաւոր Կայսեր՝ հանդերձ զերտաստանով Մուսքուա գլուու, և թէ ստրիկաց ազատութեան պատճառաւ, ցուցանելու համար, որոշեցին առաջնորդը՝ կրթել տալ հաւաահակ առաջանակ մէջ 50 տղայ, կատուցանելով նոցա համար ուսումնաբանին կից առանձին տուն, և վերջնորդը՝ վճարել տէրութեան աղքատ մեշտանինների պարտքը, որ հաստնում է մինչև 10,000 ռուբ. արծաթ:

— Փեթերպուրի շրջակայքում երեւցաւ պյու ամառ, որպէս և անցեալ տարի, Մետքան Իսա (Սոնիքայ յանակ) անունով հիւանդութիւնը:

— Ուշանու գաւառական լրագրի մէջ գրում են՝ թէ նոյն գաւառի Սրասսքի անուաննեալ ուեղդումը, Պօրօք գիւղում, Վարվարա Կիրիթինա անունով կին Յունիսի 24 ին ծնել է զաւակ՝ երկու զլիսով, երկու կուրծքով և մի փորով և մի պորտով, շրս ձեռքով և չորս ոտքով, առանց սերական անդամների: Այս էակը մինչեւ ցայժմ ևս կենդանի է, և երբ որ նորա մի մասնը քնած է, միւսը ընդհակառակն արթուն է, և աղաղնակ է բարձրացնում:

— Ակէնկինսք քաղաք Եկատ մի Զինացի վաճառական Խճ-Սճ-Թը ընկերութեան, որ կամենում է գալ նաև Մոսքուա և Փեթերպուրի, պյու կողմէրի վաճառականութեան հետ ծանօթանալու համար:

— Կասպից ծովի մէջ Պարու և Էնքորան քաղաքների միջցում երեւցաւ մի կղզի:

Պուլղարից Սօֆի անոն քաղաքի մէջ պատահեցաւ զարհուրելի անցք: Տօրփէյ միտրապօլիսը, որի վերայ Պուլղարները նայում էին որպէս Քանարիօտի վերայ (ին Յունաց աղանդառառ), թշլ չուուցին նորան մուաննել պատրիարքարան, այն հիման վերայ, որ նորա ցանիան նում են ունենալ աղային Հայրապետ, համաձայն խոսումնան, որ տուուծ է յայտնի Գէրմանի մէջ: Տեսանելով այդպիսի ընդդիմութիւն, միտրապօլիսը գանգատուեցաւ փաշային, և փաշան անօրինեց իւր իմացածի պէս: Նա Հրամաց կոչէլ այն Պուլղարներին, որ յայտնի էին նորան որպէս Պուլղարեան աղգայնութեան զօրել պաշտպաններ, և նոցա թուում Սօփիայի Պուլղարեան վարժարանի երիցագին վարժապետին ևս: Այդ բարը Պուլղարեան աղգայնութեան պաշտպանները առանց որոշման ենթարկուեցան Տաճկական պատժի, այն է Թուքիոյ, իսկ միտրապօլիսը ուղեկից ունենալով իրեան Տաճկի քավանները, մուա պատրիարքարան: Իսկ միւս օրը նորան դասն սպանուածնեցին իսկ սենեակներումը, որպէջ բնակուեցաւ նախընթաց օրը:

— Պօրէնցիայից (որ Խոալիսի քաղաքների մինն է) գրում են թէ

Յունիսի 2 ին, աղգային տօնախմբութեան օրը բոլոր բարձրաստիճան հոգևորականները չամսաձայնեցան մասնակից լինել աղգային հանդիսի մէջ: Նոյն ձեռվարին նորա և Խոալիսից գուրս: Քայիրի մէջ նորա հրաժարուեցան ժամերգութիւն կատարելուց, երբ որ այդ բանը ցանկացան Խոալացիքը, որ լնակուում էին այդ քաղաքումը: Դորանով ըստականացան հոգևորականները, այլ փակեցին դեռ ևս եկեղեցւոց դուները. բայց այն ժամանակ Հրէաները առաջարկեցին լնակիններին իւրեանց ժողովարանը (սինակոկան): զարդարեցին նորան աղգային դրօշակներով և նորա մէջ տօնախմբութիւն Խոալիսի վերածնութիւնը, որ ժողովուած էին Քայիրի բազմաթիւ Հրէաները, որ եղայրաբար գրկախառնուում էին Խոալացոց հետ, չորհաւորելով նոցա ուրախալի հանդիսը: Կարող ենք պատմերացուցանել մեղայն տպաւորութիւնը, որ լնակում է այդպիսի հանգամանքներում: Այդ ինչ անհաւատական կուրութիւն է, որով Աստուած որպէս թէ հարուածել է Հոռվմէական հոգևորականներին:

— Լոյցեալ Յուլիսի 14 ին Պատէն-Պատէնումը, Լէ յիցիկեան Համալսարանի ուսանող Օպարո-Պէքքէրը, որ ծնուած է Օտէսսայում, հրացան արձակեց Քրուսից թագաւորի վերայ, որ թէպէտ շատ հեռի չէր սպանողից, սակայն ստացաւ միայն վզի վերայ թէթէ հարուած գնատակի: Այս եղաւ Լիսթենթալեան պարտիզի մէջ: Ցիշեալ ուսանողը, որ 21 տարեկան է, ոչ մի ընդդիմութիւն ցցց չտուեց, երբ որ բոնեցին նորան, և բարձրածայն յայսնեց՝ թէ կամք ուներ սպանանել թագաւորին, որի անձը պատուում էր, բայց կարծում էր, թէ նա չէ կարող կատարելու այն ամենայն, ինչ որ Գէրմանիայն պահանջուում է: Պէքքէրի մօտ գտան մի նամակ, որի մէջ նկարազրուած ած են բոլոր նորա մաքերը: Թագաւորին ամենայն կողմից լնդակցութեան թղթեր են ուղարկուում՝ նորա այնպիսի մահաբեր փորձանքից աղատուելու համար: Պէրլին քաղաքի արժանաւոր անձինքը ևս կամենում էն մատուածնելու կատուցանել նոյն իսկ տեղում, ուրեղաւախութեալ դաւաճանութիւնութիւնը:

— Լոյցից փառակմնող հաստատեց նոր օրէնք, որով Անդլից մէջ պարտաւորուում է իւրաքանչիւր մարդ պատուաստուիլ, և նշանակուեցաւ պատիժ այն ծնողների համար, որը չէն կատարելուած այդ օրէնքը:

— Վաստրալիայի Մէլպօրն քաղաքի բնակինները ուղարկեցին Անդղիացոց գեսպանին՝ որ գտանւում է Վիկոսոր - Կինանուելի Դրան մօտ, այն է՝ Ճօն Գուտստոնին, մին շքեղազարդ թուր, երկու հազար ուուբ. արծաթ արժողութեամբ, Կարիպալտին նուէր, նորա վերլին պատերազմի յիշատակի համար:

— Առլթան Ապատւ-Ազիզի մայրը հաստատեց կոստանդնուպոլիսի մէջ կանանց հիւանդանոց: Այս կինի առաջնի օրինակ այդպիսի ձեռնարկութեան Մահմետականների մայրաբարձրուումը:

— Քարքուլ քաղաքուումը Հրէկից Ռարբէրն արգելեց բոլոր մատաղասահական օրիորդներին ունակ անուանած շրջազգեստը հագնել, ասելով թէ որ այս հրամանը չէ կատարելու, նա չէ կարող մուտք ունենալ ժողովարանը:

— Կոր Օրէան քաղաքուումը Հրէկից Ռարբէրն արգելեց բոլոր մատաղասահական օրիորդներին ունակ անուանած շրջազգեստը հագնել, ասելով թէ որ այս հրամանը չէ կատարելու, նա չէ կարող մուտք ունենալ ժողովարանը:

— Կոմ կապուի յիշատակի համար Ճէնովայի մէջ պիտի արձան կանգնեցուցուի, և այդ արձանի շինութիւնը պէտք է Անկա անուն Ճարտարապետին:

— Կաղզից կայսրն Ապատէն, բնակուելով այս ամառ Աիշի մէջ, պարապեցաւ Յուլիս Կեսարի պատմութեան շարադրութեամբ, որ և, ասում էն, շուտով կիրացան:

— Կոր Օրէան պատմուումը կոչուեցաւ Գիւնդ առաջնորդ Կարիպալտին:

— Ճիւն Քաղաք առաջնի տերարկը պիտի հրատարակուի: Երկրորդի շիտ ՚ի միամին, Ճիւնում էր 1 ին:

ԽՄԲԲԱՋԻՇՔՐԻՉՔՐ Մ. և Զ. ՄՄԵՐԵԱՆՑ

ՄԱՆՐ ՈՒՍՏՈՒԵՔ ՄՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱԸ ԱԵԽՏԱՐԱՆԻ, ԳՐԵԱԼ ՚ի ՄԱՆՐԱՅ ՄԱՐԴԱՄԱՆ ԿՐՈՆԱՐԱՅ ՎԱՐԴԱՄԱՆ ԵՐԵՎԱՆԻ 1861. տպագրեալ Վեհափառական կամուղիկուի, հրամանաւ, աղգային գալորդների մէջ գործածութեան համար, Գինն ուղարկելով 40 կոպ. արծ. բայց հինգ օրինակից պակաս չուղարկուում այլ քաղաքներ:

ՃԻՒՆ ՔԱՂԱՔ, կրօնական, բանասիրական և աղգային գիտելեաց համար Երկրորդ 1860—1861. գինն ուղարկելով Յ ուուբ. արծաթ: